ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Թագուհի Թովմասյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2024 թվականի ապրիլի 1-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Թագուհի Թովմասյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով չի նախատեսում ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հետ կապված վեճերի վերաբերյալ գործերը վարչական դատարանին ընդդատյա լինելը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(...) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը նախատեսված չէ

պետական քաղաքական պաշտոնների ցանկում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

(...) Նախորդ կետերում նշված խնդրանքները կամ դրանցից որևէ մեկը բավարարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և/կամ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներն իր մեկնաբանությամբ ճանաչելով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ կգտնի, որ դրանք Դիմողի նկատմամբ կիրառվել են այն մեկնաբանությամբ, սահմանել, որ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/5769/05/23 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ չի նախատեսվում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հետ կապված վեճերի վերաբերյալ գործերը վարչական դատարանին ընդդատյա լինելը, որն էլ հակասում է Սահմանադրության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 80-րդ հոդվածներին:

Միաժամանակ, Դիմողի պնդմամբ՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման ընթացքում և դրա հետևանքով կարող են խախտվել այդ պաշտոնն զբաղեցնող անձի՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված՝ հանրային ծառայության անցնելու և 50-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ լսված լինելու իրավունքները:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որով խաթարվել է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության

իրավունքի բուն էությունը՝ սահմանափակելով սահմանափակման ոչ ենթակա այդ հիմնարար իրավունքը: Ըստ Դիմողի՝ նույն հանգամանքներով պայմանավորված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը չի սահմանում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Դիմողի պնդմամբ՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ պետական քաղաքական պաշտոններ են համարվում միայն այն պաշտոնները, որոնք թվարկված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում, իսկ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնն այդ ցանկում ներառված չէ, ուստի՝ տվյալ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները**,** և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,** ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում **առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին***:*

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականության գնահատման հարցեր**: Հակառակ դեպքում՝ նման դիմումներով բարձրացված հարցերը չեն կարող ենթակա լինել Սահմանադրական դատարանի քննությանը, քանի որ դուրս են վերջինիս իրավասության շրջանակից:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1255) օրենքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումն օրենսդիր իշխանության իրավասությունն է: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ օրենքի բացը

պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն պարագայում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր վերոնշյալ դիրքորոշումները, արձանագրում է, որ **նորմատիվ իրավակարգավորման բացի լուծումը գտնվում է օրենսդիր իշխանության իրավասության տիրույթում: Այդպիսի բացը կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, միայն եթե օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ նման երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:**

Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի հարցին)՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են ՀՀ վարչական դատարանին ընդդատյա՝ հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:

Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդրի կողմից հստակ սահմանված է պետական քաղաքական պաշտոնների սպառիչ ցանկը՝ դրանում չներառելով Ազգային ժողովի՝ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Այս մասով օրենսդրի կամքը հստակ է՝ պայմանավորված վիճարկվող դրույթներում ուղղակիորեն տվյալ պաշտոնը չնախատեսելով, հանրային իրավահարաբերության և դրանից ծագող վեճերը վարչական դատարանին ընդդատյա չլինելով:

Այսպիսով՝ վիճարկվող դրույթները **Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական վերահսկողական առարկա չեն, դրանց իրավաչափությունը ենթակա չէ գնահատման սահմանադրականության տեսանկյունից, իսկ վիճարկվող դրույթներում ենթադրյալ օրենսդրական բացի առկայության պարագայում այդ բացի հաղթահարումը գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը՝ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականության հարցի մասով, ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

3.2. Դիմողի կողմից բարձրացրած հարցերի կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև հետևյալը.

Սահմանադրական դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:**

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված ***այլ դեպքերում:***

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:**

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ «(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:** (…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, **դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար**»:

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե **իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)**»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ «անհատական դիմումների ընդունելիության վավերապայմանների սահմանումն ինքնանպատակ չէ: **Այդ վավերապայմանների նպատակն է ապահովել սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը՝** դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝ ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելուն»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն **ակնհայտ անհիմն է**:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ**

գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի (օրինադրույթների) և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները և Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

Դիմողի կողմից բարձրացված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության կապակցությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

սույն անհատական դիմումի և թիվ ՎԴ/5769/05/23 վարչական գործի ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ գործի շրջանակներում վիճարկվող դրույթների առնչությամբ ՀՀ դատարանների կողմից **որևէ նոր մեկնաբանություն չի տրվել, այլ ուղղակիորեն կիրառվել է վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումները՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքները և առանձնահատկությունները:**

Ուստի՝ Դիմողի կողմից չի հիմնավորվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված ենթադրյալ մեկնաբանության՝ իր՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման հանգեցնելը, ինչպես նաև նման խախտման փաստի և վիճարկվող դրույթների միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:

Այս առումով կարևոր է հստակ արձանագրել, որ անհատական դիմումի շրջանակներում նորմատիվ իրավական ակտի դրույթի, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության կամ դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (իրավակիրառ**

պրակտիկայում տրված մեկնաբանությունը, դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը կրկին հանգում է այն եզրակացության, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Թագուհի Թովմասյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 ապրիլի 2024 թվականի
ՍԴԱՈ-74